ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Ք. Գավառ 12.04.2013 թ.

Նախագահում էր մարզպետ Ռ. Գրիգորյանը, մասնակցում էին մարզի խորհրդի 92 անդամներից 87-ը:

Մասնակցում էին մարզպետի տեղակալներ Ա. Հակոբյանը, Մ. Մանուկյանը, մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Խլղաթյանը, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետեր, բաժինների վարիչներ, գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնի ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և ՀՀ տարածքային կառավարման նախարարության տարածքային կառավարման ու զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական, ծրագրավորման և վերլուծության բաժնի վարիչ Տիգրան Խաչիկյանը :

Օրակարգում՝

1. Մարզի համայնքների 2013 թվականի գարնան գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման մասին:
   /Զեկ. Վ. Հովհաննիսյան - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ/

2. Մարզի համայնքների 2013 թվականի առաջին եռամսյակի եկամուտների հավաքագրման ցուցանիշների ապահովման և բյուջետային ծախսերի ծրագրավորման մեթոդաբանության մասին:
   /Զեկ. Ա. Սահակյան - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ/

3. Այլ հարցեր:

Արտահայտվեցին՝

Վ. Խլոյանը - Վարդենիսի քաղաքապետ
Պ. Աղաջանյանը - Ծաղկունք համայնքի ղեկավար
Գ. Բաղալյանը - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

Մարզխորհրդի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Ռ. Գրիգորյանը:

1. Առաջարկել նախորդ տարիներից կուտակված աշխատավարձերի պարտքեր ունեցող համայնքների ղեկավարներին՝ ձեռնարկել միջոցներ մինչև հաշվետու տարվա վերջը մարելու պարտքերը, իսկ խոշոր պարտքերը հասցնել նվազագույնի:
2. Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին՝
1) ձեռնարկել գործուն միջոցներ 2013 թվականի եկամուտների հավաքագրումը համամասնությամբ իրականացնելու ուղղությամբ.
2) ուշադրության կենտրոնում պահել հողի հարկի, գույքահարկի և գույքի վարձակալությունից եկամուտների հավաքագրման գործընթացը.
3) ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները գարնան գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպելու և արդյունավետ անցկացնելու համար.
4) մինչև արոտային շրջանի սկիզբը կազմակերպել համայնքներում առկա խոշոր եղջերավոր անասունների պատվաստումը <<Սիբիրախտ>> հիվանդության դեմ:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ